ԿԱՐԾԻՔ

ԺԳ.00.02 - «Դասավանդման և դաստիարակության մեթոդիկա» (ֆիզիկական կուլտուրա) մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված Գրիգոր Եդիգարի Բարսեղյանի «Մարզական բարձր արդյունքների ցուցադրման գործոններն ու դրսևորման առանձնահատկություններն արագաուժային մարզաձևերում» թեմայով ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսական աշխատանքը նվիրված է արագաուժային մարզաձևերում մարզական բարձր արդյունքների ցուցադրման գործոններին և դրսևորման առանձնահատկություններին: Հարկ է նշել, որ տվյալ ատենախոսական աշխատանքը բավականին հետաքրքրություն և կարևորություն է իրենից ներկայացնում հայրենական բարձր նվաճումների սպորտում, մարզիկների սպորտային պատրաստության ոլորտի համար:

Աշխատանքն արժևորվում է նաև նրանով, որ հատկապես մեր հանրապետությունում վերջին ժամանակներում բարձր նվաճումների սպորտին նվիրված համալիր ուսումնասիրությունները և հետազոտությունները շատ քիչ են:

Ներկայացված ատենախոսական աշխատանքի հետազոտության արդյունքները և հիմնական դրույթները կօգնեն տարբեր որակավորման մարզիկների սպորտային պատրաստության գործընթացի առավել արդյունավետ կազմակերպմանը: Փորձ է արվել ուսումնասիրված մարզական բարձր արդյունքներին հասնելու առաջնային գործոնների մոդելային բնութագրերը ներդնել մարզական պրակտիկայում:

Ատենախոսական աշխատանքը շարադրված է 138 համակարգչային էջի վրա, բաղկացած է ներածությունից, 3 գլուխներից, եզրակացություններից, գրականության ցանկից, հավելվածների բաժնից:

Ներածության մեջ հիմնավորված է թեմայի արդիականությունը, բնութագրվում են հետազոտության նպատակը, օբյեկտը, առարկան, ներկայացված են հետազոտության խնդիրները, մեթոդներն ու վարկածը: Տրված է հետազոտության

գիտական նորույթը, աշխատանքի տեսական և գործնական նշանակությունը, պաշտպանությանը ներկայացվող հիմնական դրույթները, հետազոտության կազմակերպումն ու հետազոտվողների քանակակազմը, արդյունքների հուսալիությունը, ատենախոսության փորձաքննությունն ու կառուցվածքը:

Առաջին գլուխը «Մարզական բարձր արդյունքների ցուցադրման հիմնախնդիրները բարձր նվաճումների սպորտում» վերնագրով ներառում է երեք ենթագլուխ: Որտեղ հանգամանորեն վերլուծված է ժամանակակից սպորտի մասնավորապես բարձր նվաճումների սպորտի նոր ժամանակների հիմնախնդիրները և ներկա մարտահրավերները:

Ներկայացված են տարբեր հեղինակների հետազոտությունների արդյունքները, որոնք վկայում են ժամանակակից սպորտի աննախադեպ զարգացման մասին: Այս ուսումնասիրությունների արդյունքում հեղինակը նշել է մի շարք չուսումնասիրված հարցեր և որոշել աշխատանքի հետազոտության ուղղվածությունը:

Երկրորդ գլուխը վերնագրված է «Մրցակցային գործունեության արդյունավետության բնութագրերը սպորտում», որտեղ չորս ենթագլուխներում բնութագրվում է մրցակցային գործունեության կառուցվածքը, տեխնիկան, ռազմավարությունը և մարտավարությունը, ինչպես նաև արդյունքների գնահատումը սպորտում:

Գլխում ներկայացված է հեղինակի կողմից փորձարարական հետազոտության արդյունքների վերլուծություն՝ հեռացատկ տեխնիկայի բնութագրման վերաբերյալ, տարբեր որակավորման մարզիկների օրինակով:

Երրորդ գլխում, որը վերնագրված է «Մարզական բարձր արդյունքների ցուցադրման առաջատար գործոնների հետազոտության արդյունքներն արագաուժային մարզաձևերում» ներկայացված է աշխատանքի բուն հետազոտությունների կազմակերպումը, ընթացքը, արդյունքների վերլուծությունը և մանկավարժական գիտափորձի կազմակերպումը:

Հետազոտություններ կազմակերպվել են սպորտային պատրաստության տարբեր ոլորտներից՝ ֆիզիկական զարգացման, շարժողական ընդունակությունների, հոգեշարժիչ ցուցանիշների և մրցակցային գործունեության արդյունավետության ցուցանիշների:

Հետազոտություններն անցկացվել են Գյումրի քաղաքում, բարձր և ցածր որակավորում ունեցող մարզիկների հետ: Ընտրվել են չորս արագաուժային մարզաձևեր՝ աթլետիկա, բռնցքամարտ, ըմբշամարտ, ծանրամարտ, յուրաքանչյուրից 20-ական բարձր որակավորման և նույնքան ցածր որակավորման մարզիկներ:

Հետազոտության արդյունքները և վերլուծության ցուցանիշները, հեղինակին թույլ են տվել կառուցել արագաուժային մարզաձևերում մարզական բարձր արդյունքների ցուցադրման հիմնական գործոնների մոդելային սխեմներ, որոնք կարող են նաև հիմք ծառայել տարբեր մարզաձևերում մարզիկների սպորտային պատրաստության գործընթացի վերահսկման ու գնահատման համար:

Մանկավարժական գիտափորձի ընթացքի և արդյունքների վերլուծությունը կատարվել է հիմք ընդունելով հեղինակի կողմից նախապես հետազոտված ցուցանիշների արդյունքների վերլուծությունները, մանկավարժական գիտափորձում ներառվել են այն հիմնական ցուցանիշները, որոնք արագաուժային մարզաձևերում հանդիսանում են մարզական բարձր արդյունքների ցուցադրման, մարզիկի պատրաստվածության աստիճանի հիմնական ու առաջնային բաղադրամասեր: Գիտափորձի նպատակն էր բացահայտել մարզական պարապմունքներին մեր կողմից ներդրված և տեղայնացված վարժությունների համալիրների և խորհրդատվությունների ներգործության աստիճանը, սպորտային պատրաստության հիմնական ցուցանիշների և առաջատար գործոնների աճի դինամիկայի վրա:

Մանկավարժական գիտափորձում, որտեղ փորձարարական խմբերի (4 խումբ, աթլետիկա, բռնցքամարտ, ըմբշամարտ, ծանրամարտ), պարապմունքներին ներդրվել են հեղինակի կողմից մշակված և ընտրված վարժությունների համալիրները:

Փորձարարական և ստուգողական խմբերում ընդգրկվել են պատանի 40-ական հետազոտվող մարզիկներ: Հետազոտություններն անցկացվել են Գյումրու ՕՊՄՀՔ-ի և Աթլետիկայի մարզադպրոցի մարզիկների հետ:

Պատանի մարզիկների սպորտային պատրաստության ուսումնասիրված ցուցանիշները զարգացման հավաստի տեղաշարժեր են արձանագրել մանկավարժական գիտափորձի արդյունքում:

Մանկավարժական գիտափորձից ստացված արդյունքներն ունեն հավաստիության բարձր մակարդակ:

Ներկայացված եզրակացություններում լիովին ամփոփում են ստացված արդյունքները և հիմնական դրույթները:

Ատենախոսության հիմնական դրույթները արտացոլված են հեղինակի հրատարակած հոդվածներում, սեղմագիրը համապատասխանում է աշխատանքի հիմնական բովանդակությանը:

Դրական գնահատելով կատարված հետազոտության աշխատանքը, հարկ եմ համարում նշել որոշ դիտարկումներ և բացթողումներ, որոնք պարզաբանման կարիք ունեն.

1. Որ մակարդակի (կարգի) են ձեր կողմից ընտրված և հետազոտված բարձրակարգ մարզիկները, ճիշտ կլիներ հստակ նշել:
2. Նշվում է, որ մանկավարժական գիտափորձը շարունակվել է ինն ամիս, կարող եք պարզաբանել, պատանի մարզիկների սպորտային պատրաստության, որ փուլերում է փորձարարությունն անցկացվել:
3. Ներկայացված վարժությունների համալիրներից մանկավարժական գիտափորձի ընթացքում հեղինակի կողմից նշվում է, որ կազմվել են փնջեր համապատասխան մարզաձևի առանձնահատկությունից ելնելով, լավ կլիներ այդ առանձնացված համալիրները ներկայացված լինեին կոնկրետ մարզաձևի օրինակով:
4. Հավելված բաժնում բավականին գրագետ և հակիրճ ներկայացված են հոգեշարժիչ և մրցակցային գործունեության արդյունավետության հետազոտված ցուցանիշների ուսումնասիրման առանձնահատկությունները, իսկ շաժողական ընդունակությունների հետազոտման մեխանիզմների բնութագրերը բացակայում է, որոնք նույնպես ցանկալի էր ներկայացնել:
5. Աշխատանքում օգտագործված է մարզական «բարձր արդյունքների *ցուցադրում*» հասկացությունը, իսկ ինչպես է բացատրվում նյութում երբեմն հանդիպող «մարզական բարձր արդյունքների *ցուցաբերում*» տարբերակի կիրառումը:

Վերը նշված նկատառումները բոլորովին չեն նվազեցնում կատարված ծավալուն հետազոտական աշխատանքի արժեքը:

Աշխատանքը կատարված է բարձր գիտական մակարդակով, տեսական և գործնական նշանակությամբ հիմնավորված, և միտված է ուղղորդող դեր ստանձնել արագաուժային մարզաձևերում մարզիկների սպորտային պատրաստության և մրցակցային գործընթացի առավել արդյունավետ կազմակերպմանը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ատենախոսական աշխատանքի ստացված հավաստի արդյունքները և եզրակացությունները վկայում են, որ Գրիգոր Եղիգարի Բարսեղյանի «Մարզական բարձր արդյունքների ցուցադրման գործոններն ու դրսևորման առանձնահատկություններն արագաուժային մարզաձևերում» թեմայով ատենախոսությունը ավարտուն, ինքնուրույն գիտական աշխատանք է, և համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին, ինչպես նաև ԺԳ. 00.02 «Դասավանդման և դաստիարակության մեթոդիկա» (ֆիզիկական կուլտուրա) մասնագիտության թվանշանին: Իսկ հեղինակը արժանի է մանկավարժական գիտությունների թեկնածուի պատվավոր գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս՝ ՀՊՄՀ-ի
հատուկ մանկավարժության և հոգեբանության
ամբիոնի պրոֆեսոր, մանկ. գիտ. դոկտոր՝ Ռ.Ն. Ազարյան

Պրոֆեսոր Ռ.Ն. Ազարյանի ստորագրության իսկությունը հաստատում եմ.

ՀՊՄՀ-ի գիտ. քարտուղար՝ Մ. Իսպիրյան

«09» 11 2020 թ.